

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՈՎՏԱՄԵՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2014 Թ ԱՌԱՋԻՆ

ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի համայնքի բնակիչներ, հյուրեր պարոն Ա. Այվազյան այսօր Ձեր քննարկմանն ենք ներկայացնում Հովտամեջի գյուղական համայնքի ղեկավարի, ավագանու և գյուղապետարանի աշխատակազմի 2014 թ. հունվարի 1-ից մինչև հունիսի 30 -ը կատարած աշխատանքները:

Գյուղապետարանը իր գործունեությունը իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն:

Գյուղն ունի 250 տնտեսություն, 1458 բնակչություն, 906 ընտրող, 267 հա ընդհանուր հողատարածություն, 215 գյուղատնտեսական նշանակության ոռոգելի հողեր՝ որից՝ 153 հա վարելահող, 55 հա տնամերձ հողամաս 7 հա համայնքային սեփականության հողեր; 2014 թ. գարնանը մշակվել է 196 հա, անցյալ տարվա համեմատ ավել է մշակվել 32 հա, չի մշակվել 19 հա; չմշակելու հիմնական պատճառներն են՝ սեփականատերերը բացակայում են, սեփականատերերը միջոցներ չունեն, ունեն սերմացույի և իրացման խնդիր: Գյուղում հիմնականում մշակում են կարտոֆիլ, ցորեն և կաղամբ:

Ըստ բնագավառների կատարվել են՝

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Սահմանված կարգով կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձումները: Գույքահարկի գանձումը կիսամյակային պլանով նախատեսվել է 800,0 հ.դ փաստացի կատարվել է 790,1 հ.դ այսինքն 98.7%: Հողի հարկը կիսամյակում նախատեսված է 550,0 հ.դ փաստացի կատարվել է 540,7. դ. այսինքն 98,3 % : Պլանով նախատեսված այլ եկամուտներ 20,0 հ.դ. փաստացի կատարվել է 0,0 % Պետության կողմից ստացված դոտացիան կատարվել է 100%, կիսամյակային կատարողականը 99,9 %

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հովտամեջի միջնակարգ դպրոցի նախակրթարանի 1 ուսուցիչի աշխատվարձ է վճարվել 292,4 հ.դ յուրաքանչյուր ամիս 50,4 հազ դրամ Շրջանավարտների համար կազմակերպվել է միջոցառում դպրոցը ավարտելու կապակությամբ ծախսվել է 100,0 հազ դրամ : Համայնքը ունի գրադարան 5476 կտոր գրականությունով, որը շատ լավ պահպանված է: Գրադարանից օգտվում են 28 ընթերցող, որոնք հիմնականում դպրոցականներ և ուսանողներ են:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Ժամանակին էջմիածնի զինկոմիսարիատ ենք ներկայացրել համայնքի կցագրման ենթակա պատանիներ: Սայիսի 9-ի կապակցությամբ համայնքում կազմակերպվել է միջոցառում, ծախսվել

է 100, 0 հազ. դրամ իսկ Արցախյան պատերազմի 25 մասնակիցների տրվել է օգնություն 500.0 հ.դ յուրաքանչյուրին 20.0 հ.դ.

զոհված ազատամարտիկների 3 ընտանիքների տրվել է օգնություն 90.0 հ.դ. յուրաքանչյուրին 30.0 հ.դ., ծաղկեպսակներ է դրվել հայրենական պատերազմի և դարաբաղյան շարժման զոհված ազատամարտիկների հուշարձանին:

Համայնքում մահացած 8 ընտանիքների հարազատների տրվել է դրամական օգնություն յուրաքանչյուրին 30.0 հ.դ. և ծաղկեպսակներ է դրվել մահացածների շիրիմներին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Մարտի 8-ի կապակցությամբ համայնքում բնակվող 65 տարեկանը լրացած 66 կանանց տրվել է նվերներ, որի համար ծախսվել է 326,7 հազ. դրամ.

Սոցիալապես անապահով 2 ընտանիքի որպես օգնություն տրվել է 100 հ.դ. Համայնքում նոր ծնված 2 երեխաների ընտանիքների տրվել է դրամական օգնություն 60.0 հ.դ. յուրաքանչյուրին 30.0 հ.դ.:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հունվարի 1-ի տասնօրյակում կազմակերպվել է անասնազխաքանակի համատարած հաշվառման աշխատանքներ և արդյունքները ներկայացվել է վիճակագրական ծառայություն: հաշվառվել և վիճակագրական վարչություն է ներկայացվել ցանքերի հուլիսյան հաշվետվության 4 ԳՏ ձևը: Վերանորոգվել և մաքրվել է ոռոգման ներտնտեսային ցանցի ջրամատակարարումը, որը ապահովում է տնամերձ հողամասերը:

ԿՈՍՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵՎԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Գարնանը մաքրվել է գյուղամիջյան ճանապարհի երկու կողմի առուները: Կատարվել է աղբաթափություն շաբաթը մեկ անգամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Խմելու ջրագծերի վերանորոգում
2. Էլեկտրոլարերի մաշվածություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՍԱՐԳՍՅԱՆ